

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N11

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի  
հունիսի 21-ին կայացած Գիտական Խորհրդի նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 29-ը (ցուցակը կցվում է)

Նախքան խորհրդի նիստի բացումը Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

**Օրակարգ**

1. 2017/2018 ուստարվա ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվությունը /զեկ. Լ.Հախվերդյան, Պ.Էֆենդյան, Գ.Կարապետյան, Մ.Ապրետյան, Վ.Մուրադյան/
2. 2017-2018 ուս.տարվա ամբիոնային ծանրաբեռնվածության կատարումը /զեկ. ամբ. վարիչներ/
3. 2018/2019 ուս.տարվա ամբիոնային ծանրաբեռնվածության կազմման գործընթացը /զեկ. ամբ. վարիչներ/
4. Ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման գործընթացը ֆակուլտետում /զեկ. Ա.Գրիգորյան/
5. Ընթացիկ հարցեր

1. **ՀՄԵՑԻՆ.** Գևորգ Կարապետյանի 2017/2018 ուստարվա ավարտական ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունը: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Գ.Կարապետյանն իր ելույթում մանրամասնորեն ներկայացրեց ատեստավորման քննությունների ընթացքը, ուսանողների կողմից պատրաստվածության մակարդակը, ներկայացված թեզերի որակը և ներկայացման բնույթը: (Հաշվետվությունը կցվում է)

**ՀԱՐՅԵՐ ՏՎԵՑԻՆ. պրոֆ.Թ.Գ. Վարդանյան**՝ արդյո՞ք փոփխության կարիք չունի գնահատման սանդղակի ներկայիդ բաղդատումը և միավորների բաշխվածությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**դոց.Պ.Գ.Դավթյանը** շեշտեց, որ շրջանավարտները նախապես զգուշացված են եղել բողոքարկման կանոնակարգին: Խոսեց նաև ուշացած (3 օր անց) բողոքարկումների մասին, որոնց գնահատականները, տեսանյութի կրկնակի դիտումից հետո, այնուամենայնիվ փոփոխության չեն ենթարկվել:

**դոց. Գ.Փ.Ալեքսանյանն** խոսեց գնահատման բնույթի և բակալավրիատում գրախոսականների վերանայման անհրաժեշտության մասին:

**դոց. Ռ.Ս.Մովսեսյանը** խոսեց ավարտական աշխատանքի պաշտպանության ժամանակ դեկավարների պարտադիր ներկայության մասին, ինչն իր խոսքով ավելի անկաշկանդ կդարձնի ուսանողի՝ պաշտպանողի ելույթը:

**Ս.Ա.Առաքելյանն** իր խոսքում շեշտադրեց ավարտական աշխատանքներին հատկացված ժամերի մասին: Նա առաջարկեց քննարկել այդ հարցը ամբիոններում և հատկացված ժամերի բարձրացման հարցի որոշումը ներկայացնել ռեկտորատ:

**Ս.Ա.Գրիգորյանը** շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի նախագահներին իրենց բարեխիղճ մասնակցության և աշխատանքների քննարկման համար, ովքեր օգնեցին ներկայացված աշխատանքների օբյեկտիվ գնահատման հարցում: Ցավոք կային <անբավարարներ>, սրանք այն աշխատանքներն էին որոնց դեպքում զիջելու տեղ չկար,- խոսքի վերջում ասաց Ս.Գրիգորյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել 2017-2018 ուստարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների նախագահների հաշվետվությունները:

**2. ԼՍԵՑԻՆ.** ամբիոնի վարիչներ Պ.Գ.Դավթյանի, Ն.Ա.Հարությունյանի, Գ.Փ.Ալեքսանյանի, Ս.Հ.Հայրոյանի, Շ.Վ.Խաչատրյանի, Ռ.Ս.Մովսեսյանի, Գ.Վ.Մարկոսյանի հաղորդումը 2017-2018 ուս.տարվա ամբիոնային ծանրաբեռնվածության կատարողականների վերաբերյալ: Բոլոր ամբիոնի վարիչները նշեցին, որ նախատեսված ծանրաբեռնվածություններն իրականացված են գրեթե լիարժեք՝ բացառությամբ ուսումնական և արտադրական պրակտիկաների, որը գտնվում է ընթացիկ փուլում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն:

**3. ԼՍԵՑԻՆ.** ամբիոնի վարիչներ Պ.Գ.Դավթյանի, Ն.Ա.Հարությունյանի, Գ.Փ.Ալեքսանյանի, Ս.Հ.Հայրոյանի, Շ.Վ.Խաչատրյանի, Ռ.Ս.Մովսեսյանի, Գ.Վ.Մարկոսյանի հաղորդումը 2018/2019 ուս.տարվա ամբիոնային ծանրաբեռնվածության կազմման գործընթացի վերաբերյալ: Ելույթի ժամանակ բոլոր ամբիոնի վարիչները շեշտեցին, որ ծանրաբեռնվածությունները կազմվում են ըստ հասանելիության՝ քանի որ աշխատանքային պլաններում առկա են որոշակի խնդիրներ, մասնավորապես հեռակայի և մագիստրատուրայի որոշ աշխատանքային պլաններում:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* ընդունել ի գիտություն

**4. ԼՍԵՑԻՆ.** Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման գործընթացի վերաբերյալ: Նա մանրամասն աներկայացրեց ուսումնական պրակտիկաների երթուղիներն ըստ մասնագիտությունների և կուրսերի ինչպես նաև արտադրական պրակտիկաների հրամանագրված հիմնարկ-ձեռնարկությունները: Գրիգորյանը կոչ արեց նաև, որպեսզի ամբիոնի վարիչները հետևողական լինեն անվտանգության կանոնների մասին ուսանողներին իրազեկելու, ծանուցագրերը ստորագրելուն: Իր խոսքում Ա.Գրիգորյանը ցանկություն հայտնեց, որպեսզի ամբիոնի վարիչները ներկա գտնվեն յուրաքանչյուր երթուղու դուրս եկող ուսանողներին ճանապարհելու համար: Ա.Գրիգորյանն իր խոսքը ավարտեց շեշտելով պրակտիկաների ավարտի ժամկետը՝ հուլիսի 24-ը:

*ՈՐՈՇԵՑԻՆ.* ընդունել ի գիտություն

## **5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ**

**5.1 ԼՍԵՑԻՆ.** ՈւԳԸ գծով գիտական ղեկավար Ռ.Ս.Մովսեսյանի հաղորդումը, ով նշեց, որ ՈւԳԸ տպագրության ներկայացված հոդվածներն ուղարկվել են ամբիոնների վարիչների անձնական էլ.հասցեներին: Առաջարկվում է մինչև սեպտեմբերի 1 ամբիոններում վերանայել տպագրվող հոդվածները՝ հետագա սխալներից և վրիպումներից խուսափելու համար:

**5.2 ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի միջնորդությունը աշխ.գ.թ., Տիգրան Արտավազդի Սարգսյանի, Սերվիսի ամբիոնի դոցենտի պաշտոնի թափուր տեղի համար մրցութին մասնակցելու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին, ինչպես նաև տ.գ.դ.,Վահրամ Պանդուխտի Վարդանյանի, Երկրաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնի թափուր տեղի համար մրցութին մասնակցելու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին:

Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար առաջարկվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Արամայիս Սարգսյանի, անդամներ՝ Ակսել Հարությունի Պոտոսյան և Սեյրան Ռաֆիկի Սուվարյան:

**ԼՄԵՑԻՆ.** Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Ա.Սարգսյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության անցկացման արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 38 անդամներից քվեարկության մասնակցել են 29-ը: Քվեատուփում առկա էր 29-ական քվեաթերթիկ (նիստի արձանագրությունը կցվում է):

Վահրամ Պանդուխտի Վարդանյանի <Երկրաֆիզիկայի> ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնում ընտրվելու հարցում կողմ են քվեարկել 28-ը, դեմ՝ չկա, անվավեր՝ 1:

Տիգրան Արտավազդի Սարգսյանի <Սերվիսի> ամբիոնի դոցենտի թափուր պաշտոնում ընտրվելու հարցում կողմ են քվեարկել 28-ը, դեմ՝ չկա, անվավեր՝ 1:

**5.2.1 ՈՐՈՇԵՑԻՆ** - Հաստատել հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա.Ս.Սարգսյանի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և հաստատել Վահրամ Պանդուխտի Վարդանյանին <Երկրաֆիզիկայի> ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

**5.2.2 ՈՐՈՇԵՑԻՆ** - Հաստատել հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա.Ս.Սարգսյանի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և

հաստատել Տիգրան Արտավազդի Մարգարյանի <Մերվիսի> ամբիոնի դոցենտի պաշտոնում:

**5.3 ԼՄԵՑԻՆ.** Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ.Ս.Բայանի հաղորդումը նույն ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Հասմիկ Սպարտակի Քոչարյանի /ընդունված 2017թ/ թեմայի և ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ:

**ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.** Հասմիկ Սպարտակի Քոչարյանի ատենախոսական թեմա նշանակել «ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)» վերնագրով, իսկ գիտական ղեկավար՝ Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ Վարդուհի Գուրգենի Մարգարյանին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Հասմիկ Սպարտակի Քոչարյանի ատենախոսական թեմա հաստատել «ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)» վերնագրով և գիտական ղեկավար հաստատել Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ Վարդուհի Գուրգենի Մարգարյանին:

**Խորհրդի նախագահ**

**Մ.Ա.Գրիգորյան**

**Խորհրդի քարտուղար**

**Ե.Ս.Մանուկյան**